ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Կատարող՝ **Արմենուհի Խաչատրյան**

Առարկա՝ Հայոց լեզու և հայ գրականություն

Ուսումնական հաստատություն՝ «Հրազդանի թիվ **12** հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ՀՐԱԶԴԱՆ **2022**

Բովանդակություն

1.Ներածություն
2.Նպատակներ,խնդիրներ
3.Արդիականություն
4.Նկարագրություն
5.Կիրառություն
6.Եզրակացություն
7.Օգտագործված գրականության ցանկ

Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ:Այն պահից,երբ բացահայտվեն առավել

արդյունավետ մեթոդները,,կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը,որը կարող է բարելավել կյանքը:

Բ. Ֆ. Սքիներ

Դպրության 1600-ամյա պատմություն ունեցող Հայաստանում կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել:Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը:Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել:Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում դասավանդման նոր մեթոդների կիրառումը և կրթության համակարգի՝ միջազգային ասպարեզում մրցունակության ապահովումը: Դասավանդման ընթացքում արդյունավետ մեթոդների ու հնարների կիրառումը նպաստում է աշակերտների կողմից թեմայի առավել մատչելի ընկալմանը,դասանյութի լիարժեք յուրացմանը և գիտելիքների ամրակայմանը:

Ուսուցման բազմաթիվ մեթոդները պայմանավորված են դասավանդվող առարկայով, դասի նպատակով ու բնույթով:

<<Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ ,գործիք և ուսումնասիրության արդյունք>>:

Վիգոտսկի

Ներածություն

<<Ուսուցման մեթոդը>> բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է ուսուցման գործընթացի բարդությամբ:Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել(կրթության բովանդակություն),ինչու՞., ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել(ուսուցման մեթոդաբանություն):Կր թության բովանդակությունը(ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակներն(ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակներն(ինչու՞ սովորեցնել) իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ ,ձևեր:Որպես

ուսուցման գործընթացի միջուկ՝ մեթոդը փոխշաղկապում է ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը:

Այսպիսով, ուսուցման գործընթացում մեթոդը ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն մի դասից առաջ մի քանի կարևոր խնդիրներ է դնում իր առջև.

_ ինչպե՞ս լավ պլանավորել
_ ինչպե՞ս լավ իրականացնել դասը
_ ինչպե՞ս կանխատեսել արդյունքները
_ ինչպե՞ս հասնել նպատակներին
_ ինչպե՞ս վերլուծել հաջողություններն
ու բացթողումները:

Այս խնդիրների իրականացման համար
ուսուցիչը պետք է ուսուցման բազմազան
մեթոդների լավ իմացություն և դրանք կիրառելու կարողություն ձեռք բերի:

Նկարագրություն

Ի՞նչ է մեթոդը:Մեթոդը հունարեն բառ է(metodos), որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ:Գիտական գրականության մեջ մեթոդն ունի բազմաթիվ սահմանումներ: Նեկայանենք դրանցից մի քանիսը.

<<Ուսուցման մեթոդը ուսուցման այնպիսի ձև է,որը կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա>>:/ Голубков В.В
Методика преподавания литературы._М.,1962/:

<<Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտների հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը:/ Скаткин М.Н.,Лернер И .Я
Российская педагогическая энциклоредия/:

Սահմանումների բազմազանության և առատության մեջ ,այնուամենայնիվ նկատելի են որոշակի ընդհանրություններ:Այսպես օրինակ՝ համարյա բոլոր սահմաններում մեթոդը բնութագրվում է որպես <<նպատակին հասնելու միջոց, գործիք>> կամ <<ուսուցչի և աշակետի համատեղ
գործունեություն>> և այլն: Եթե փորձենք ընդհանրացնել և մեկ անգամ ևս բնութագրել մեթոդը,ապա կարող ենք ասել,որ այն ուսուցչի և աշակերտի

համագործակցությունն է ուսումնական միջավայրում ,նրանց համատեղ գործունեությունն է՝ միտված ուսումնական նպատակների իրականացմանը:

Այսպիսով ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն:Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունվետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողություն:

Մեթոդների ընտրության և կիրառության
կարողությունն իր հերթին պայմանավորված է մի շարք գործոններով.

_սովորողը պետք է հստակ իմանա՝ ինչ է անում և ինչո'ւ.

_սովորողը պետք է մշտապես տեղյակ լինի՝ ի'նչ է իրենից ակնկալվում.

_սովորողը պետք է վստահ լինի,որ ուսուցիչը աջակցելու և օգնելու է.

_ուսուցիչը պետք է կարողանա համադրել բազմազան մեթոդները նույնքան բազմազան արդյունքներ ստանալու համար:

Այսպիսով, ուսուցչի մեթոդամանկավարժական և պատրաստվածության աստիճանը պայմանավորված է մասնագիտական կարողությունների կարևոր մասը կազմող բազմազան մեթոդների իմացությամբ, դրանք կիրառելու, համադրելու հմտությամբ: Ուսուցչի մեթոդական կոմպետեցիան ուսուցման գործընթացի արդյունավետությունը ապահովելու կարևոր պայման է:

<u>Նպատակները և խնդիրները</u>

Հայ դպրոցը խորհրդային տարիներին ապահովում էր հիմնարար ու բազմակողմանի կրթություն: Սակայն ուսուցման ֆրոնտալ եղանակը նպաստում էր միայն սովորողների կողմից գիտելիքների սերտմանը,մտապահմանը,որը նրանց պետք չէր գալիս:

Կրթական բարեփոխումների համակարգում այսօր խիստ կարևորվում է աշակերտների գործուն մասնակցությունը կրթական գործընթացին,որի համար անհրաժեշտ է,որ ուսուցիչը դառնա բարեփոխումների կրող,նոր գաղափարների,մեթոդների և մոտեցումների արմատավորող,դատող _մասնագետ::Ուսուցիչը համագործակցային ուսուցման և փոխներգործուն մեթոդների կիրառման շնորհիվ բոլորին պետք է ներգրավի ուսումնական պրոցեսի մեջ:Այս պարագայում սովորողն ինքն է բացահայտում, գտնում,հասկանում նոր նյութը:Մեթոդներն են,որ նպաստում են դասի նպատակների իրականացմանը:

Ի՞նչ մեթոդներ են այսօր անհրաժեշտ ուսուցչին արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող:Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Դրանց մի մասը բռնել են ժամանակի քննությունը ,ավանդաբար կիրառվել ու կիրառվելու են: Սակայն հասարակության զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված նոր խնդիրներն ու հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Ավանդական են համարվում բացատրական,զննական այն մեթոդները ,որոնց հիմքում ը Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր կամ ժամանակակից մեթոդներ:

նկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած են սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը,գիտելիքի ձեռքբերման ճանապարհին նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:Ուսուցման ընթացքում աշակերտի գործուն մասնակցությունն ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:

Դրանց առանձնահատկություններն են.

_աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով,մասնակցելով որոշակի գործընթացի

_աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը,որքան ինքնուրույն,ստեղծագործական, քննադատական մտածողությանը

_աշակերտը հնարավորություն ունի ինչպես անհատական,այնպես էլ խմբային աշխատանք կատարելու

_աշակերտը ձեռք է բերում համագործակցային , սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ

_նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել,ամփոփել,ակտիվացնել ու կիրառել սովորածը
_ձևավորվում է ինքնակրթության, ինքնակատարելագործման ձգտում:

Ուսումնական գործընթացի նոր տեխնոլոգիաներն արդյունավետ դրսևորվում են գեղարվեստական տեքստերի ուսումնասիրման ընթացքում : Գեղարվեստական տեքստի միջոցով աշակերտի մեջ ձևավորվում են բարոյական արժեքներ ,մարդկային հարաբերություններ,իսկ տեքստը կարդալու մեթոդիկան պետք է նպաստի սովորողի ակտիվ իմացական դիրքորոշման ձևավորմանը:Գաղտնիք չէ,որ աշակերտներն այսօր գրեթե չեն կարդում գեղարվեստական կամ գիտահանրամատչելի գրքեր:Այս առումով կարևոր է տեքստի առնչությամբ հատուկ աշխատանքի կազմակերպումը:Համագործակցային ուսուցումը նպաստում է նյութի ճիշտ ընկալմանն ու յուրացմանը,սովորողների պատասխանատվության բարձրացմանը , միմյանց նկատմամբ օժանդակության ,աշխատանքային,սոցիալական հմտությունների ,ստեղծագործական մտածողության ձևավորմանը:
Հենվելով համագործակցային ուսումնառության սկզբունքների վրա ՝ աշակերտները վարժվում են դրսևորել իրենց իմացական , հետազոտական վերաբերմունքը կարդացածի վերաբերյալ,ավելի խոր ներթափանցել գեղարվեստական լուծումների մեջ,բացահայտել հերոսների արարքների դրդապատճառները,գնահատել նրանց վարքագիծը,վերլուծել կերպարները,համապատասխան եզրահանգումներ կատարել:

Անվիճելի իրողություն է,որ ուսուցման մեթոդները պետք է համապատասխանեն սովորողների տարիքային առանձնահատկություններին:Միջին դպրոցում հարկավոր է կազմակերպել երեխայի մտավոր կարողություններին համապատասպան այնպիսի գործունեություն,որի մեջ հիմնավորված լինի բոլոր գործողությունների ներքին պատճառաբանվածությունը:Այդ իմաստով նպատակահարմար միջոցներ են՝
1.**Տարբեր տիպի դիդակտկ նյութերի օգտագործումը՝** նկար,իրական առարկա,գծապատկեր,պաստառ,աղյ ուսակ և այլն:
2.**Զուգորդական կապերի հաստատումը՝** նմանօրինակության,չափազանցման օրինակների վկայակոչումներ(աշակերտը կապում է նոր տեղեկությունը,նոր հասկացությունը մինչ այդ ունեցած փորձի հետ):Որքան հստակ է նոր տեղեկության կապը իմացածի հետ, այնքան կայուն է նոր ձեռք բերած գիտելիքը:
3.**Անմիջական փորձի վրա հիմնված գործողություններ՝** նյութի տարբերաբնույթ կիրարկումներ(նկարչություն, պատի թերթի պատրաստում, խաչբառի լուծում ,թեմատիկ բառարանների,աղյուսակների կազմում և այլն) դերերի

խաղարկում հարցազրույց վերաբերմունքի,խոսքի արտահայտում դիմախաղով ու ժեստերով:**Բազմազգայական(մուլտիսենսորային)** աշխատանքի այս մեթոդը հաջողությամբ կիրառվում է բազմաթիվ երկրների դպրոցներում

4.**Երևակայական գործունեություն:**Այս մեթոդի առավելությունն այն է,որ շեշտադրվի մարդու ազատությունը արտաքին աշխարհի սահմանազատումներց:Երևակայությունը կարող է սովորողներին տեղափոխել ցանկացած ժամանակ և տարածություն:Երևակայության միջոցով հնարավոր է երեխայի անմիջական,անձնական փորձը միատեղել բաղձալի հորիզոններում:Պետք է նշել ,որ հատկապես ս տեղծագործող անհատներին բնորոշ երևակայությունը հազվագյուտ մտավոր ներուժ է,որը օժանդակում է նրանց լիարժեք կայացմանը:

Դասապրոցեսում կիրառվող բազմապիսի մեթոդները հնարավորություն են տալիս աշակերտի կամ նրանց խմբի կողմից ստեղծածը (ինքնաշեն գրքույկներ,խաչբառեր,հարցաշարեր)որպես ուսումնական նյութ օգտագործել դասարանի կամ դպրոցի մեկ այլ խմբի համար: Նման մոտեցումը բարձրացնում է սովորողների պատասխանատվության զգացումը,գիտելիքներ է հաղորդում, խթանում է երևակայությունը:

Հայոց լեզվի և գրականության դասերին կիրառվող ամենատարածված ձևերն ու գործուն մեթոդներց են՝

1.Դասախոսություն

2.Բացատրություն-վերլուծություն

3.Թեստային աշխատանք

4.Աշխատանք դասագրքով և լրացուցիչ գրքով

5.Զրույց-Բանավեճ-Հիմնավորում

6Դասի անցկացում համակարգչով

7.Դասի մոդելավորում կամ քարտեզագրում

8.Գործնական աշխատանքներ

9.Ինքնուրույն աշխատանքներ

10.Վարժություններ/աղյուսակներ,Վենի դիագրամ,Տ-աձև աղյուսակ...

11.Խմբային աշխատանք

12.Ցուցադրում-իլյուստրատիվ մեթոդ

13.Դերային խաղ ...

Ցանկացած մեթոդ կիրառելիս կարևոր է ուսուցչի բանավոր խոսքը,շեշտադրությունը ,նյութի ներկայացման եղանակը:

Հայոց լեզվի և գրականության դասավանդման նպատակներից է գրագիտության ուսուցում,անսխալ ու վարժ գրելու,կարդալու հմտությունների ձևավորում,լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում,բանավոր խոսքի զարգացում,գրական ստեղծագործությունների,հերոսների նկատմամբ հետաքրքրությունների դրսևորում,վերլուծական մտքի զարգացում,բառապաշարի հարստացում,սոցիալական հմտությունների դրսևորում,բարոյական բարձր հատկանիշների ու արժեքների գնահատում....

Մեթոդների նկարագրություն

<< Կրկնակի գրառումների օրագիր>>

Այս մեթոդը նպաստում է տեքստի ընկալմանն ու յուրացմանը, միաժամանակ այն հնարավորություն է ընձեռում ընթերցող-աշակերտին կապել տեքստի հետ: Մեթոդը առնչություն է ստեղծում կարդացածի և կյանքում տեղի ունեցածի որևէ դեպքի, զգացողության հետ:

Քայլերը

_տետրի էջը մեկ ուղղահայաց գծով բաժանել երկու մասի

_ձախ կողմում անհրաժեշտ է գրանցել տեքստից մի հատված կամ նշել որևէ հերոսի անուն,որը մեծ ազդեցություն է թողել՝ հիշեցնելով անցյալը կամ որևէ դեպք իրական կյանքից

_աջ կողմում անհրաժեշտ է նշումներ կատարել այն մասին,թե ինչու է ընտրվել այդ հատվածը,կերպարը,կատարել մեկնաբանություններ,գրանցել հիշողություններ

Երբ աշակերտները ավարտում են իրենց գրառումները, նրանցից մի քանիսին առաջարկվում է կարդալ դրանք:Այս մեթոդով աշխատանքը արդյունավետ է,եթե ուղղորդված է ընդհանրացված հարցադրումներով:Դրանք օգնում են աշակերտին ամբողջական ընկալել տեքստը:

Մի քանի ընդհանուր հարցերի օրինակներ.

1.Ի՞նչ հիշողություններ արթնացան այս նյութն ընթերցելիս:

2.Ի՞նչ էիք մտածում,երբ ընթերցում էիք տեքստը:

3.Ո՞րն է այս նյութի ամենակարևոր ասելիքը:

4.Ի՞նչ հարցեր մնացին անպատասխան:
5.Ի՞նչը կփոխեիք:
6.Ի՞նչ միջոցներով է հեղինակը փորձում գրավել ընթերցողին:
Մեթոդը կիրառում եմ գրականության դասերն,հաջողությամբ արձանագրում աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:Ռաֆֆու <<Խենթը>> ուսուցանելիս կիրառել եմ այս մեթոդը:Վերը նշված հարցերի պատասխաններն ստանալով՝հասկացա ,որ տեքստն ամբողջապես ընկալվել է աշակերտներիս կողմից:

10- րոպեսնոց շարադրություն

Այս մեթոդը նպաստում է տեքստի ընկալմանը, ինքնուրույն վերաբերմունքի ձևավորմանը,մտքերը արտահայտելու կարողությանը,ստեղծագործական,վերլուծական մտքի զարգացմանը:Մեթոդը հարմար է կիրառել տեքստի ընթերցումից և ընդհանուր քննարկումից հետո:Այս աշխատանքը չպետք է նմանվի նախապես մտածված և պլանավորված շարադրության:Այն ավելի շուտ ազատ խոհագրություն է,որը նպատակ ունի բացահայտել ստեղծագործական խորքեր:
Այս մեթոդը կիրառում եմ գրականության դասերին՝առաջադրելով դասանյութի բանալի բառերով հորինել պատմություն:

5-րոպեանոց շարադրանք
Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել դասի վերջում: Նպատսկն է ամփոփել ուսումնասիրված թեման և հնարավորություն տալ աշակերտներին
թեմայի վերաբերյալ իրենց մտքերն ամփոփելու և արտահայտելու: Հինգ րոպեի ընթացքում սովորողները նախ պետք է շարադրեն ,թե ինչ սովորեցին,ապա գրեն մի հարց տվյալ թեմայի մասին,որն իրենց հետաքրքրում է,որի պատասխանը չգիտեն:
Ավ.Իսահակյանի <<Եղնիկը>>դասի վերջում կիրառելով այս մեթոդը հասա մի վերջնարդյունքի,որ աշակերտներս մի քանի նախադասությամբ ճիշտ ձևակերպեցին մտքեր՝ բանտված ազատության վերաբերյալ:

Երեք բանալի և մեկ կողպեք

Այս մեթոդը տեքստի ընկալման, վերլուծության,կշռադատման արդյունավետ ձև է:

Աշակերտներին հանձնարարվում է տեքստից դուրս գրել երեք պարբերություն,որոնք ստեղծագործության ամենահիմնական մասն են կազմում և արտահայտում հիմնական գաղափարը:Սրանք դառնում են տեքստի հիմնական բանալիները:

Ապա հանձնարարվում է սեփական բառերով կազմել մեկ նախադասություն,որը տվյալ տեքստի հիմնական բովանդակությունն է արտահայտում:Սա դառնում է կողպեք:

Այս մեթոդը կիրառել եմ գրականության դասերի ընթացքում:Գ Սունդուկյանի <<Պեպո>> թատերգություն:

ՈՒսումնական բանավեճ

Սա որևէ առանձին թեմայի շուրջ անցկացվող մտքերի դրույթների,կարծիքների փոխանակությունն է:Այն պետք է լինի նպատակամետ և կառուցվի որոշակի կարգով:Կարևոր նախապայմաններից մեկը բոլոր սովորողների մասնակցությունն է:Նպատակը որևէ թեմայի շուրջ քննարկում կազմակերպելն է,բանավիճելու կարողությունների զարգացումը, ունեցած գիտելիքի ամրապնդումը,նորի ձեռքբերումը,սեփական կարծիքի ձևավորումը,ամրապնդումը,պաշտպանությունը:

Այս մեթոդը ևս բազմիցս կիրառել եմ,կիրառում եմ:Այն զարգացնում է աշակերտի ինքնուրույն մտածելու դատողություններ անելու մշակույթը:

Մտքերի տարափ կամ մտագրոհ

Այս մեթոդը խմբային աշխատանքի պարզագույն,բայց շատ արդյունավետ մեթոդ է:Այդպես է կոչվում,քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանության: Բոլոր գաղափարները գրանցվում են մաքուր թղթի վրա:Այս մեթոդը թելադրում է իր կանոնները.

1.*Ցանկացած քննադատության բացակայություն*

Մտքերի ազատ հոսք կարող է լինել միայն այն ժամանակ,երբ բացակայում է քննադատության վտանգը:

2. *Գաղափարների խրախուսում*

Շեշտը պետք է դնել արտահայտվող մտքերի քանակի,այլ ոչ թե որակի վրա:
3.*Մասնակիցների հավասարություն*

Յուրաքանչյուր մասնակից պետք է զգա,որ իր կողմից ասված միտքն արժանի է ուշադրության:
4.Զուգորդումների ազատություն
Հաճախ այն միտքը,որը ոչ տեղին է թվում,կարող է նպաստել մեկ ուրիշի մոտ հետաքրքիր մտքի առաջացմանը:

*5.*Բոլոր մտքերի գրառում
Գրառումը և' կարևոր արտահայտությունների գրանցումն է ,և'
դրանցից ազատվելով՝ նոր մտքերի առաջացմանը նպաստելը:
Մեթոդի կիրառումը

Այսմեթոդը արդյունավետ է կիրառել ցանկացած առարկայի դասի խթանման փուլում,նաև՝
●որոշումներ կայացնելու
●կոնկրետ խնդիր լուծելու
●ստեղծագործական մտածողությունը խթանելու
●երևակայությունը զարգացնելու
●լսելու հմտություններ ձևավորելու
●համագործակցային թիմ ձևավորելու
●ինքնավստահություն նեչշնչելու համար:
Մեթոդը կիրառել եմ գրականության դասերին՝ կերպարներ քննարկելիս (Նար Դոս<<Ես և Նա>>):
ՎԵՆԻ ԴԻԱԳՐԱՄ

Այս մեթոդը կարլեի է օգտագործել նյութի ամփոփման ժամանակ:
Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով
,որոնք հատման մեծ տարածք ունեն կենտրոնում,որտեղ նշվում են ընդհանրությունները ,իսկ չհատվող մասերում՝ նրանց առանձնահատկությունները:
Ռաֆֆու <<Խենթը>>վեպում վենի դիագրամով ցույց ենք տալիս Վարդանի երազի և այսօրվա Հայաստանի ընդհանրությունները:
Փ.Բուզանդի <<Հայոց պատմության>><<Արշակ և Շապուհ>>վիպական դրվագի նույնանուն կերպարներին ևս ներկայացնում ենք դիագրամի միջոցով:

Մանրապատում

Մինչև այս մեթոդի կիրառումը աշակերտներին առաջարկվում է հիշել իրենց կյանքից ինչ -որ դեպք՝ կապված ստեղծագործության բովանդակությանը:
Երբ ընթերցել են տեքստը,պատասխանում են այս հարցերին.

1. Ինչի մասին էր գործը
2. Ընտրել մի հղում(ֆրազա,ցիտատ)
3. Բնութագրել ստեղծագործությունը(մեկ բառով)
4. Նկարել որևէ խորհրդանիշ՝միտքն ամփոփող
5. Ի՞նչ գույնի էր ստեղծագործությունը
6. Ի՞նչ երաժշտություն հիշեցրեց տեքստը:
7. Ամենալավը այս գործում...

Օրինակ՝Վահան Թոթովենցի << Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>> ինքնակենսագրական վեպն ընթերցելուց հետո կիրառում եմ **Մանրապատում մեթոդը:**

ՎԵԲ -ՈՐՈՆՈՒՄ

Այս մեթոդը հետազոտության վրա հիմնված ուսումնական գործունեություն է:

Քայլերը

.Ընտրե'լ լուծում պահանջող հարցը:
.Գտնե'լ խնդրի կարևորությունն ու .կիրառական նշանակությունը:
.Ինտերնետային աղբյուրները:
.Այլ աղբյուրներ:
.Որոնման արդյունավետ ձևերը:
.Հետևել կատարողականին:
.Գնահատման չափանիշների
մշակում,քննարկում:
Այս մեթոդով ուսուցման հիմնական նպատակներն են՝
●գիտելիքների ձեռքբերում,յուրացում
ընդլայնում,հստակեցում
●տրամաբանական մտածողության զարգացում
●համագործակցային հմտությունների զարգացում

●հետազոտության արդյունքների ներկայացում
●սեփական տեսակետ առաջադրելու,պաշտպանելու կարողությունների ձևավորում

●տարբեր տեխնիկական միջոցներից օգտվելու հմտության զարգացում:

Խ.Աբովյանի անհետացման առեղծվածը կամ Պ.Սևակի մահվան վարկածները ուսումնասիրեցինք **վեբ-որոնման մեթոդով:**

ՕՐԻՆԱԿ՝ <<Բառ և դարձվածք>>թեման 6-րդ դասարանում ուսումնասիրելիս գործածում եմ բազում մեթոդներ ու հնարներ՝**<<Խմբային հետազոտություն>>, <<Տ-ածև աղյուսակ>>,<<Կենսագրական բանաստեղծություն>>,<<Քարտեզագրում>>,<<Անդրադարձ>>,<<5-րոպեանոց>>շարադրանք:**

Ուսուցման ժամանակակից գործընթացների արդյունավետությունը կախված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունից:

ԽՈՍՔԱՅԻՆ,ԶՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ,ԳՈՐԾՆԱԿԱՆ մեթոդները կիրառելի են տարբեր առարկաների դասավանդման ժամանակ:

Խոսքային մեթոդների մեջ մտնում են պատմելը,բացատրելը,մեկնաբանությունը,զրույցը ,գրքի վրա աշխատանքը, գրավոր աշխատանքը,ուսումնասիրությունը,բանավեճը, ռեֆերատը:

Զննականության մեթոդների խմբի մեջ մտնում են ուսումնական կինոները,մանրանկարները ,ներկայացումները,սխեմաները,պլակատները...:Կարևոր է հիշել,որ բարձր դասարաններում չափից դուրս տարվել զննական մեթոդների կիրառմամբ ճիշտ չէ,որովհետև ավելորդ պատկերները խանգարում են վերացական մտածողության զարգացմանը:

Գործնական մեթոդների խմբի մեջ մեջ մտնում են քերականական,բառագիտական,հնչյունաբանական,ոճաբանական,գրականագիտական առաջադրանքների,խնդիրների,հետազոտական ուսումնասիրությունների կատարումը:Գործնական մեթոդների կիրառումը սովորաբար օգտակար է դառնում,երբ զուգորդվում է վերլուծությունների ,համադրությունների,մեկնաբանությունների հետ,մի հանգամանք,որն օգնում է սովորողների մտածողության,երևակայության զարգացմանը:

Հնարքը կազմում է ուսուցման

մեթոդների մի բաղադրամաս և նրա հետ գտնվում է դիալեկտիկական փոխհարաբերությունների մեջ,այսինքն

որևէ կոնկրետ թեմա անցնելիս(գրականությունից)պատմելը,բնութագրելը կարող են հանդես գալ որպես հիմնական մեթոդ,իսկ վերլուծությունը՝որպես հնարք:Կերպարների ուսումնասիրման ընթացքում՝ընդհակառակը,վերլուծությունը կարող է հանդես գալ որպես գլխավոր մեթոդ,իսկ նկարագրությունը՝օժանդակ:

Ակսել Բակունցի <<Սպիտակ ձին>> պատմվածքի ուսուցումը:

Նպատակը
Սովորողը պետք է՝
_ ընկալի և վերատադրի պատմվածքի բովանդակությունը
_ բացատրի,թե ինչու է այդպես վերնագրված
_ վերհանի պատմվածքի հիմնական գաղափարը
_ դատողություններ անի և իր սեփական կարծիքն արտահայտի պատերազմի բերած ավերածությունների,մարդկային ճակատագրերի,հասարակական շերտերի վերաբերյալ
_ հերոսների կերպարները բնութագրի
իրենց իսկ խոհերում
_ կատարի բառային,տեքստային աշխատանք

(5դասաժամ)

Խթանում(10 րոպե)

Որպեսզի սովորողները պատկերացում կազմեն պատմվածքի ժանրային առանձնահատկությունների մասին ,անհրաժեշտ է բացատրել ,թե ինչ է պատմվածքը է որպես գրական տեսակ:
Պետք է տեղեկացնել,որ պատմվածքը սկսվում է սովորական,իրական նկարագրությամբ:Պատմողը կա'մ հեղինակն է,կա'մ ականատեսը, կա'մ հերոսը:
Կատարում եմ հարցադրում.<<Երազե՞լ եք արդյոք ձի ունենալ>>:Նպատակահարմար եմ համարում առաջադրել<<**ձին՝ ապրուստի միջոց>>,<<ձին՝որպես շքեղություն, վայելք>> հակադրումը:**
Այդ կերպ հնարավորություն եմ տալիս նրանց դատողություններ անել:
Գրատախտակին գրել եմ տալիս **ձի** բառի բոլոր հոմանիշները:
Մտագրոհի մեթոդով պարզում եմ ,թե
ինչպիսի ձիեր գիտեն սովորողները:Ինքնաբուխ արտահայտված մտքերը գրի են առնվում գրատախտակին(վայրի,ընտանի, հեծկան,լծկան,ծանրաքարշ, արագավազ,տրոյական,արաբական...):Միանգամայն տեղին է տեղեկություն հաղորդել նաև տրոյական ձիու վերաբերյալ:

Անկյուններ մեթոդական հնարով ծավալվում է բանավեճ՝ <<Պատերազմների բերած կորուստները և մարդկային ճակատագիրը>> թեմայով:Այստեղ ադրադսրձ է կատարվում 1918 թվականի պետականության վերականգնմանը(Բաշ Ապարան-Ղարաքիլիսա-Սարդարապատ),Ղարաբաղի համար մղված պայքարին,քառօրյա,քառասունչորսօրյա
պատերազմներին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ(20 րոպե)

Կարճ դասախոսություն մեթոդով ներկայացվում է Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցությունը հայ ժողովրդի վրա:

*Հայրենիքի փրկության հույսով ստեղծվեցին հայկական կամավորական ջոկատներ, որոնց զինվորագրվեցին նաև Ե.Չարենցն ու Ա.Բակունցը:Այդ ժամանակաշրջանն այսպես է հիշում Բակունցը.<<Ու քայլեցի ես ուրիշների հետքերով, շատերի պես:Ճամփեն երկար ու դժվարին,ճամփեն արևոտ ու մոլոր,բայց քայլեցինք մենք հավատով ու անտրտունջ:Եվ հոգնած,ա
րևառ ճակատով,հյուծված ու վտիտ գալիք օրվա կարոտով էինք ջերմանում...Մեր ոտքերը մաշվեցին քայլելուց,մեր ծնկները կքվեցին ծանր բեռից...Իզու՛ր,իզու՛ր ,իզու՛ր...*

Ծավալվում է քննարկում.ինչու՞ է վերնագրված<<Սպիտակ ձին>>,եթե ընթերցողին մտահոգում, հետաքրքրում է Ցոլակի ճակատագիրը:

Ո՞րն է պատմվածքի գաղափարը:Արվում են մեկնաբանություններ:
Աշակերտներին տրամադրում եմ անկաշկանդ մտքեր արտահայտելու և ուղղորդում եմ նրանց հանգելու հետևյալ եզրակացության. պատմվածքի հիմնական գաղափարը Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով հայ գյուղի սոցիալական ծանր վիճակի,կյանքում տեղ գտած անարդարության և հասարակական տարբեր խավերի միջև գոյություն ունեցող անհավասարության խորացումն է:

Դիպաշարի,դրա բաղկացուցիչ
մասերի ուսուցումը

Նախադրություն. աշակերտները կարդում են պատմվածքի առաջին մասը, ուր երևում է Շարմաղ բիբին՝ իրեն շրջապատող առարկաներով,իր աստվածավախ հոգով:
*Հանգույց.*սա դիպաշարի հաջորդ բաղադրիչն է ,որտեղից սկիզբ է առնում բախումը:Այստեղ այն դրսևորվում է խաղաղ իրականության և գզիրի՝ այդ խաղաղությունը տակնուվրա անող բոթաբեր կանչի միջև:

Սովորողները պետք է կռահեն,թե Հայաստանի ո՞ր տարածաշրջանում է կատարվում գործողությունը:Հարկավոր է ցույց տալ նաև գրական լեզվի և հերոսների խոսվածքների տարբերությունը:

Քննարկում. կարո՞ղ էին Բակունցի հերոսները խոսել գրական լեզվով:

Գրատախտակին դուրս են գրվում խոսակցական արտահայտությունները,ապա դրանց գրական համարժեքները:

Սյուժեի այս բաղադրիչ մասերից դասարանում աշակերտները գրում են պատկերավորման միջոցները:

Համեմատություններ

-Երկար ու կերկեր,իբրև արևելյան թախծոտ երգ, ճռնչում էր հին դուռը...

-...կարծես թե տեսնում էր զանգերի տխուր ղողանջները,ինչպես մթնող երկնքի նազով ճախրող աղավնիները

-...դուռը չերգեց երկար ու կերկեր,այլ դժգոհ վնգստաց պառավ շան նման...

Մակդիրներ

ջինջ ձայն

սողացող մշուշ

ոսկեթել աղավնի

ռամիկ հավատ

տխուր ղողանջ

անուրախ մանկություն

Փոխաբերություններ

-...երգում էր հին դուռը...

-...երկնային մի օրհնություն թրթռալով ներս է մտնում...

-...ալիք-ալիք դիզվեց ձայնը...

Գործողությունների զարգացում.

դիպաշարի այս հիմնական բաղադրամասերն ուսումնասիրելու համար հատկացվում է 1 դասաժամ:

Կիրառում եմ **Համագործակցային մեթոդը:**Դասարանը բաժանում եմ 4 խմբի: Նկատի եմ առնում ուժերի հավասար բաշխվածությունը:Պատմվածքն ըստ հատվածների առաջադրում եմ խմբերին:

Առաջին խումբ_2-րդ, 3-րդ հատվածները

Երկրորդ խումբ_4-րդ ,5-րդ հատվածները

Երրորդ խումբ_6-րդ հատվածը

Չորրորդ խումբ_7,8,9-րդ հատվածները

Նրանք պետք է վերնագրեն հատվածները,դուրս գրեն անծանոթ բառերը,բառարանի օգնությամբ բացատրեն բառերը կամ ասեն հոմանիշները ,դուրս գրել պատկերավորման միջոցները,արտահայտիչ կարդալ և վերարտադրել պատմվածքի բովանդակությունը:

<<Ցոլակ ձին>>

<<Սիմոնը գիշերային մենության մեջ>>

<<Վերջին տխուր հրաժեշտ>>

<<Ձիավորների՝ դեպի քաղաք ձգվող ուղին>>

<<Հրեղեն ձին>>

<<Մահվան հրապարակը>>

<<Հույսերի խորտակում>>

Յուրաքսնչյուր խումբ միավորվում է մեկ սեղանի շուրջ,,կատարվում է աշխատանքի բաժանում:Հստակեցնում եմ իմ պահանջները,բացատրում,թե ինչ եմ ակնկալում յուրաքանչյուր խմբից դասի ընթացքում:

10 րոպեանոց նախապատրաստական փուլից հետո հանձնարարությունների համար տրամադրում եմ 35 րոպե:

Պարբերաբար մոտենում եմ,դիտում յուրաքանչյուր խմբի աշխատանքը ուղղություն ցույց տալիս:

Խմբերը գնահատվում են ըստ աշխատանքի արդյունքի և արդյունավետ համագործակցության:

Գագաթնակետ.

սյուժեի այս ամենալարված բաղադրամասն ուսուցանելու համար խմբերին տրամադրում եմ բանալի բառեր կամ բառակապակցություններ,որոնցով պետք է կազմեն 10-րոպեանոց ազատ շարադրանք:

Բանալի բառեր

փրկության տենչ

խելահեղ ցասում

ատելություն

անմարդկային արարք

հուսահատ կատաղություն

չարագործություն

Հանգույցի լուծում.շարադրությունների ընթերցումից հետո աշակերտներին տալիս եմ ազատ մտածելու,արտահայտվելու հնարավորություն:Ապա ներկայացվում է իրական ավարտը:
Կործանվում են Սիմոնի հույսը և Ծարմաղ բիբիի հավատը:
Քննարկում.<<Հնարավո՞ր է մարդկային
կյանքը կառուցել առանց հույսի,հավատի, սիրո>>:
Սիմոնի,նրա ընտանիքի,համագյուղացիների կերպարների միջոցով կարելի է ներկայացնել 1910-ական թթ. հայ գյուղացուն:

Կշռադատում(15 րոպե)
Այս փուլում արդյունավետ է աշակերտներին նպատակամղել երեք ձիերի՝ Ցոլակի,Սպիտակ ձիու և կապույտ ձիու համեմատական նկարագրությանը, վերլուծությանը:

Ցոլակ	**Կապույտ ձի**	**Սպիտակ ձի**

Խմբերին հանձնարարում եմ լրացնել աղյուսակը՝ ըստ հարցերի.
1.Ինչի՞ խորհրդանիշն է ձիերից յուրաքանչյուրը
2.Գրողն ինչպե՞ս է նկարագրում նրանց:
3.Ի՞նչ պատահեց ձիերից յուրաքանչյուրի հետ:
Առաջարկում եմ մտածել հետևյալ նախադասության շուրջ՝<<Եվ Սիմոնին թվաց,թե իրենց տանից տանում են ոչ թե ձի,այլ իր եղբորը, իր որդուն...>>:

Կմախք մեթոդով ի մի են բերվում տեղեկությունները,ամփոփվում:
1.Բնութագրե'լ տեքստը:
2.Ընդգծե'լ մեկ արտահայտություն,որը կարևոր է:
3.Պատմվածքի գլխավոր իմաստը :
4.Նկարել մի պատկեր:
5.Զգացողություններ:
6.Ի՞նչը կփոխեիք:

Ուսուցման ձևերն ու մեթոդներն ի վերջո հանգում են երեխայի ուժերի ու հետաքրքրությունների զարգացման խնդրի լուծմանը: Ջոն Դյուի

Եզրակացություն

Մեթոդների կրառությունը ուսումնական գործունեությունը դարձնում են հագեցած,տպավորիչ,հետաքրքիր,բովանդակալից...

Օգտագործված գրականություն

Հանրակրթական պետական կրթակարգ Չափորոշիչներ,ծրագրեր,մեթոդներ,
Երևան 2006:
Յուրի Ամիրջանյան,Ան.Սահակյան
<<Մանկավարժություն>> Երևան 2005:
Դավիթ Գասպարյան,Գրականություն7-9,Ուսուցչի ձեռնարկ,Երևան,2011:
.
Նաիրա Տողանյան,Հեղինե Խաչատրյան,7-րդ դասարան,մեթոդական ձեռնարկ,Երևան 2008:
Գոլուբկով Վ.Վ. Գրականության դասավանդման մեթոդիկա.-Մ.,1962:
Скаткин М.Н.,Лернер И.Я. Российская педагогическая энциклопедия: